

ԿՐՕՆԱԿԱՆ

«Եւ արդ՝ եթէ թագաւորութիւն յանձն իւր բաժանեցի ո՛չ կարէ կալ թագաւորութիւն այն: Եւ եթէ տուն յանձն իւր բաժանեցի, ո՛չ կարէ կալ տունն»

(Մարկոս 9:24-25)

«Երբ թագաւորութիւն մը ինք իր մէջ բաժնուի՝ այդ թագաւորութիւնը կանգուն չի կրնար մնալ: Նոյնպէս եթէ տուն մը ինք իր մէջ բաժնուած է՝ այդ տունն ալ կանգուն չի կրնար մնալ»:

Կ'ապրինք այնպիսի աշխարհի մը մէջ, ուր յաղթելը, շահիլը ո՛չ թէ ամէն ինչ է, այլ միակ բանն է: Կ'ապրինք այնպիսի աշխարհի մը մէջ, որ մեզի կը սորվեցնէ «եթէ դուն քեզի հոգ չտանիս, ո՞վ պիտի տանի»: Կ'ապրինք այնպիսի աշխարհի մը, որ մեզի կը սորվեցնէ շահիլ ամէն գնով: Որովհետեւ մարդ արարածը առաջին հերթին տարուած է միակ և գլխաւոր ցանկութենէ մը, աշխարհիկ ստացուածքներ կուտակելու մարմաջէն, և կամ ինք իրմով, այնքան մը որ կը մոռնանք Քրիստոսի պատգամը թէ «Հոգին է կենդանարար, մարմին ինչ ոչ օգնէ»:

Ամերիկայի քաղաքացիական պատերազմի ամենածանր ժամուն, այդ օրերու նախագահ՝ Աբրահամ Լինքոլն կը մէջբերէ մեր այսօրուան բնաբանը. «Եթէ տուն մը ինք իր մէջ բաժնուած է՝ այդ տունը կանգուն չմնար». այս նախադասութեամբ ան կոչ կ'ընէր իր ժողովուրդին լրջութեամբ մօտենալու կացութեան և փրկելու երկիրը քայքայումէ և կործանումէ:

Կարգ մը դպիրներ կը փորձէին ամէն գնով նսեմացնել Աստուածորդւոյն կատարած բժշկութիւնները, ըսելով որ ան սատանային և դեւերուն օգնութեամբ էր որ կը կատարէր այդ հրաշքները: Եւ չէզոքացնելու համար այդ հրաշքներուն տպաւորութիւնը, անոնք կ'ուզէին հաւատացնել ժողովուրդին թէ Քրիստոս ինք սատանան էր, որուն համար ան կը պատասխանէ ըսելով. «Ինչպէ՞ս սատանան կրնայ սատանան հեռացնել տեղէ մը, որովհետեւ երբ տուն մը ինք իր մէջ բաժնուած է, այդ տունը այլեւս կանգուն չի կրնար մնալ»:

Մեր Տէրը անպայմանօրէն մղուած կեանքի գործնականութենէն կու տար այս պատկերը, հասկցնելով իր ունկնդիրներուն թէ ԲԱԺԱՆՈՒՄԸ կ'առաջնորդէր անմիջական պարտութեան: Ու որքա՛ն ճիշդ կը հնչեն մեր Փրկչին խօսքերը մեր եկեղեցւոյ պարագային, որ իր 1700-ամեայ պատմութեան ընթացքին քանիցս անցաւ բաժանման և ուծացման այս փորձառութենէն, որուն հետեւանքով ալ տուժեց մեծապէս, եղաւ բաժան-բաժան, կորսնցուց իր նկարագիրը ազգային և մշակութային գետիններու վրայ, տեղի տալով ստեղծմանը Պենտեկոստէական, Մորմոնական և այլ աղանդաւորական շարժումներու, ո՛չ միայն մեր իսկ հայրենիքէն ներս, այլ նոյնիսկ գաղութներէ ու համայնքներէ ներս:

Ամերիկեան նախակրթարանի մը 4-րդ դասարանի ուսուցչուհին կը թելադրէ իր երեսուն աշակերտներուն, ամբողջացնել գեղեցիկ նախադասութիւն մը, որ կը սկսէր, «շատ պիտի ուզէի...» բառերով: Այդ ուսուցչուհին կը խորհէր թէ երեխաները արդիական բջջային հեռաձայններ, “iPad” և կամ էլեկտրոնային գործիքներ պիտի

ուզէին իրենց ծնողներէն, սակայն մեծ կ'ըլլայ ուսուցչուհիին զարմանքը երբ կը կարդայ իր աշակերտներուն յայտնած կարծիքները, որոնք էին. «Շա՛տ պիտի ուզէի եթէ ծնողներս չկուէին և հայրս տուն դառնար», «Շա՛տ պիտի ուզէի որ մայրս արու բարեկամներ չունենար», «Երանի՛ կարենայի վիճակացոյցիս նիշերը բարելաւել, որպէսզի հայրս սիրէր զիս», և վերջապէս ուրիշ մը կ'ըսէր. «Երանի մէկ հայր և մէկ մայր ունենայի, որպէսզի ընկերներս չծաղրէին զիս»: Մինչ ինը տարու աղջնակ մը կ'ըսէր. «Ձեմ գիտեր թէ ընտանիք ըսուածը ի՞նչ է. կը հասկնամ երբ ընկերներդ քեզ լքելով հեռանան, բայց երանի՛ ծնողները եւս չհեռանային, ըսելով թէ այլեւս չեն ուզեր հայր կամ մայր ըլլալ»: Կը խորհիմ թէ երկրագունդի վրայ ասկից աւելի տխուր բան չկայ, քան ինք իր մէջ բաժնուած տուն մը, ընտանիք մը:

Անշուշտ այս չի նշանակեր թէ ընտանեկան կամ տնային ընթացիկ հարցեր կրնան չըլլալ: Հո՛ն ուր առողջ ընտանիքներ կան հոն կարելի է տեսնել բնական ու տրամաբանական անհասկացողութիւններ և յանձնարարելի է հարց մը ծեծել առանց լուծելու, քան թէ լուծել՝ առանց այդ հարցը ծեծելու: Եւ ատոր համար էր, որ ան իր հետեւորդներուն և հակառակորդներուն խօսեցաւ այն աղէտին մասին՝ որ հետեւանք էր ներքին բաժանումներու:

Եկեղեցին եւս, սիրելիներ դարերէ ի վեր եղած է տունը Հայուն, ուր ան ապաստան գտած է երբ աղէտներ անդադար հարուածած են մեր ազգը, սակայն ճակատագրի մէկ խաղով մեր ազգային եկեղեցին եւս երկփեղկուած է և ատոր հետեւանքը եղած է մեր եկեղեցական և ազգային կեանքի ներկայ բաժանեալ տխուր վիճակը: Ու կարծէք այդ բաւարար չըլլար, ներկայիս հայկական գաղութային կեանքէն ներս սկսած են աղանդաւորական շարժումներ, որոնք, այսպէս ըսած «հոգեւոր կեանքի» չքմեղանքին տակ, որ շա՛տ հեռու է իրականութենէ, կը հետապնդեն անձնական շահեր: Առաջին դարուն Հռոմէացիները հիացումով կ'արտայայտուէին քրիստոնեաներու մասին թէ անոնք որքա՛ն իրար կը սիրէին, սակայն այսօր մենք դարձած ենք մեր իսկ ազգային տան, մեր եկեղեցւոյ մեծագոյն թշնամիները. «Եթէ տուն յանձն իւր բաժանեցի՛ ոչ կարէ կալ տունն»: Միութիւնը ոյժ է, մինչ անմիաբանութիւնը՝ կորուստ է ու մահ:

Ն.Ա.Մ.

